[illegible]

Թիֆլիսի [illegible]

բալնեոլ. ընկ.

361
Բ-64

Ֆ.Ռ.Ը.

1908թ.

32
N. 254.
Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1 MAR 2010
361
Թ-64

# ՀԱՇԻՒ

## ԹԻՖԼԻՍԻ
## ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1907 Թ.

ՔՍԱՆՈՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑ. ՊՕԼԻՑ. 7.
1908

0 6.09. 2013
42775

370
Ձ099-ՀԱ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

*Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որ կայացաւ 1907 թ. մարտի 25-ին*

Ժողովը բացւեց 50 անդամուհիների ներկայութեամբ։

Նախագահ ընտրւեց տ. Կատարինէ Լիսիցեանը։

Քարտուղար՝—տ. Ե. Զօրեան։

Նախ քան հերթական հարցերին անցնելը ժողովականների կողմից միաձայն ընտրւեցին պատւաւոր անդամուհիներ տ. Նունէ Գամբարեանը և տ. Հայկանոյշ Մարտիրոսեանը. Ժողովում կարդացւեց՝ 1) առաջին և երկրորդ ընդհանուր ժողովների արձանագրութիւնները 1906 թ. 2) 1906 թւականի հաշիւը (մուտք և ելք) 3) 1907 թւականի համար կազմւած նախահաշիւը—այս բոլորը ժողովը ընդունեց անփոփոխ և հաստատեց, յետոյ դիմեց հերթական հարցերին

1004
15356

Վարչութիւնը յայտնեց իր որոշումը նոր արհեստ մտցնել «Կար ու ձևի ուսումնարանում»—այն է գալբայագործութիւն, որի համար անհրաժեշտ է առնւազն 1000 ռուբ. մեքենաների համար, իսկ այդ գումարը Վարչութիւնը մտադիր է վերցնել պահեստի գումարից, իբր պարտք։ Վարչութեան անդամուհիներից մէկը բացատրեց այդ արհեստի արդիւնաւէտութիւնը ընկերութեան համար և անհրաժեշտութիւնը մեր հասարակութեան համար, ևս առաւել այն խեղճ չքաւոր կանանց համար, որոնք 2 կամ 3 ամսւայ ընթացքում կարող են սովորած արհեստով ապահովել իրանց կեանքը։ Ժողովականներից մէկը առաջարկեց ընտրել մի մասնաժողով, որը հոգայ կողմնակի աղբիւրներից ձեռք բերել այդ 1000 ռուբ. մեքենաների համար և այդպիսով պահեստի գումարին ձեռք չտալ։ Ժողովը ընդունեց Վարչութեան որոշումը և գտաւ մինչև իսկ, որ պահեստի գումարը յատկացրած է հէնց այդպիսի ձեռնարկութիւնների համար և այդ հիման վրայ այդ 1000 ռուբ.նա չհամարեց պարտք։

Ժողովականներից մէկը հարցրեց թէ ինչու ուսումնարանում կարւում են միայն աղջիկ երեխաների ճերմակեղէն, աւագ վարժուհին բաւարարութիւն տւեց և բացատրեց, որ դա առաջ է գալիս ժամանակի սղութեան պատճառով։ Այնուհետև ժողովը գրաւեց նոր

կանոնադրութեան հարցով ընդհանրապէս և ծանրացաւ մասնաւորապէս նրա անւան և նպատակի վրայ։ 1) Ըստ նոր կանոնադրութեան աշխատաւոր դասակարգը փոխանակ 6 ռուբ. անդամավճար տալու, կարող է վճարել միայն 3 ռուբ. 2) Ընկերութիւնը պիտի անւանւի Կովկասեան Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն և իբր նպատակ պիտի ընդունի՝ տարածել արհեստները հետ միասին, անբաժան նաև ընդհանուր կրթական գործը։ Ընդունեց նոր կանոնադրութիւնը և առաջարկեց դիմել Փոխարքային ի հաստատութիւն։ Ժողովը դիմեց Վարչութեանանդամուհիների ընտրութեանը. մասնակցում էին 48 հոգի։

Ընտրութեան արդիւնքը։

*Իսկական անդամներ*

տ. Վ. Միլեան . . . 41
տ. Ե. Յարութիւնեան . 33
տ. Մ. Լիսիցեան . . 26

*Փոխ-անդամներ*

տ. Յ. Դաւթեան . . .
տ. Մ. Կարաջեան . .
տ. Արստամեան . . . 18
օր. Կ. Ղուլիջանեան . 7

*Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ*

տ. Հ. Աւթանդիլեան . . 44
տ. Ս. Բարխուդարեան . 31
տ. Ն. Աւետեան . . . 38

*Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ*

տ. Մ. Կուսիկեան . . 22
տ. Վ. Սպարապետեան . 12

---

## *Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութեան 1907 թուի գործունէութիւնը։*

Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը 1907 թուին իր գործունէութիւնը նախընթաց տարիների նման, կենտրոնացրել էր կար ու ձևի արհեստանոցի շուրջը։ Հաշուետուութեան տարում արհեստանոցում սովորում էին 127 աշակերտուհի։ Նոյն թուի յունիսին արհեստանոցի դասընթացն աւարտեցին հետևեալ 14 հոգին վարպետուհու կոչումով։ Ամիրբէգեան Սիրանոյշ, Ղազարեան Սիրանոյշ, Մարտիրոսեան-Մկրտչեան Վարդանոյշ, Միրզեան Մանիա, Բաղդասարեան Աստղիկ, Կոստանեան Նազելի՝ Յովհաննիսեան Վարդանոյշ, Յովհաննիսեան Վարսենիկ, Յովհաննիսեան Մարիամ, Խաչբաբեան Սաթենիկ, Պետրոսեան Մարգարիտ, Վարդազարեան Սալոմէ, Տէր-Գրիգորեան Շուշանիկ. Փարսադանեան Հռիփսիմէ։

1907 թուին կար ու ձևի չքաւոր աշակերտուհիների թւում կային 7 թոշակառու. յանուն տ. Կ. Եւանգուլեանի—Տարախչեան Զաբել, յանուն Կ. Մուրաֆեանի—Խաչատրեան Բ. և Աթաբէգեան Ա.. յանուն Մ. Մակարեանի—Իշխանեան Վ. և Մելիքեան, յանուն Նունէ Թամամշեանի—Գրիգորեան Նատալեա և յանուն Փրիդոնեանի Եղեան Աստղիկ։

Բացի թոշակառուներից արհեստանոցի միւս չքաւոր աշակերտուհիներին էլ ընկերութիւնը հնար եղածին չափ օգնել է, տալով հագուստ, կօշիկ, դեղօրայք և իրանց պարապմունքին վերաբերեալ պէտոյքներ։

Կողմնակի չքաւորներին Ծննդեան և Զատկի տօներին միանւագ նպաստ է բաժանած 99 ռուբ։

1907 թուին ընկերութիւնն ունեցել է նոր անդամներ միանւագ 150 ռուբ. վճարող՝ 3-ը տ. Սաթենիկ Քալանթարեան, շնորհու-

նակ Կոյս Իսկուհի Ընֆիաճեան և Տիկ. Մարիամ Ղարաջեան: Իսկական անդամներ 6-ական ռուբլի վճարող՝ ունեցել է 170:

Հաշուետուութեան տարում յօգուտ ընկերութեանս ստացուել են հետևեալ նուիրատուութիւնները. եղբայրք Միրզոյեանների նաւթարդիւնաբերական Ընկերութիւնից 500 ռուբ., Թիֆլիսի Վարկի ընկերութիւնից 200 ռուբ., ժողովարանից 100 ռուբ., Թիֆլիսի նաւթարդիւնաբերական Ընկերութիւնից 100 ռուբ., Պ. Մնացական Խանունցից ի յիշատակ իւր հանգուցեալ քրոջ Աննա Ղուկասեանի 50 ռուբ. ընդամենը 950 ռուբ: Ստացուել է նաև Տ. Ն. Միլեանից 500 ռուբ., որի տոկոսիքով յանուն տիկնոջ հօր՝ Ս. Փոնդոյեանի պէտք է պահուի արհեստանոցում մի թոշակառու:

Բացի այս նուիրատուութիւնները, ընկերութեան 25-ամեայ յօբելեանի առթիւ նուէր ստացուեց մի փոքրիկ մետաքսագործ գորգ Թաւրիզի Հայուհեաց Միացեալ բարեգործական Ընկերութիւնից, որը վարչութիւնս մտադիր է վիճակախաղ գցել և ստացուած գումարը մի որոշ նպատակի յատկացնել:

Յօբելեանի առթիւ վարչութիւնս ստացաւ Մօզդոկի հայուհիներից 25 ռ. 88 կոպ. հայ սովեալներին հասցնելու համար, որ և յանձնուեց Նպաստամատոյց յանձնաժողովի նախագահ պ. Ա. Մելիք Ազարեանին:

Վարչութիւնս՝ համաձայն իւր նիստերից մէկի որոշման, անցեալ տարի յօգուտ ընկերութեանս տեղի ունեցած զբօսանքի զուտ արդիւնքի 25 %-ը, որ կազմում էր 386 ռուբ., յատկացրեց Կովկասի հայ սովեալներին և յանձնեց Նպաստամատոյց յանձնաժողովի նախագահ պ. Ա. Մելիք-Ազարեանին:

1907 թուի ապրիլի 28-ին տօնուեց Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան 25-ամեայ յօբելեանը, որի առթիւ ստացուեցին Վեհափառ Հայրիկի և Պատրիարք Օրմանեանի օրհնութեան կոնդակները, արտասանուեցին բազմաթիւ ճառեր, ստացուեցին մեծ թուով շնորհաւորական ուղերձներ ու հեռագրներ զանազան ընկերութիւններից, հիմնարկութիւններից և մասնաւոր անձերից:

Վեհափառ Հայրիկի թաղման հանդիսին վարչութիւնս մասնակցեց, ուղարկելով 3 պատգամաւոր. վերջիններին պարտաւորեցրեց հանգուցեալի դագաղի վրայ թարմ ծաղիկներից խաչաձև պսակ դնել: Պսակի ծախքը հոգացուեց Ընկերութեան միջոցներից, իսկ պատգամաւորները իրանց պատրաստակամութիւնն յայտնեցին ու-



ղևորուել Ս. Էջմիածին սեփական ճանապարհածախքով: Պատգամաւորներ ընտրուեցին տ. տ. Հ. Մարտիրոսեան, Հ. Աւթանդիլեան և Ե. Յարութիւնեան:

Տաղանդաւոր վիպասան Պերճ Պռօշեանի թաղման և արձանի համար Վարչութիւնս Ընկերութեան միջոցներից ուղարկեց 25 ռուբ:

Դերասան Յ. Աբելեանի 25-ամեայ յօբելեանի առթիւ շնորհաւորական ուղերձ կարդացուեց Ընկերութեանս կողմից, որի ծախքը հոգացին Վարչութեան անդամներն իրանց միջոցներից. պատգամաւոր ընտրուեցին տ. տ. Հ. Մարտիրոսեան և Ե. Յարութիւնեան:

1907 թուի մարտի 25-ին տեղի ունեցած ընդհանուր ժողովում վարչութեանս առաջարկութիւնը գուլպայագործութեան արհեստ սկսել ընկերութեանս արհեստանոցում, թէև հաւանութիւն գտաւ, բայց մինչ ցօրդ այդ որոշումը չէ իրագործուած նախ այն պատճառաւ, որ այս բնակարանը շատ փոքր է և հնարաւորութիւն չկայ աստեղ նոր գործ սկսելու, նոյնիսկ կար ու ձևի արհեստանոցին էլ բաւարարութիւն չի տալիս: Երկրորդ՝ վարչութիւնս Տփխիսում չկարողացաւ գուլպայագործութեան յարմար մեքենայ գտնել և ստիպուած եղաւ գրագրութիւն սկսել զանազան ֆիրմաների հետ մեքենայի տեսակների, գնի և թելերի մասին: Ինչ վերաբերում է թելերին, այստեղ շատ թանգ են և ճարւում են միայն հաստ տեսակները, այն ինչ գրագրութիւնից երևում է, որ կարելի է արտասահմանից կամ Վարշաւայից ստանալ աւելի նուրբ թելեր և աւելի մատչելի գներով: Վարչութիւնս որոշել է մօտ ժամանակում ընտրել թէ մեքենայի տեսակը և թէ թելերի տեսակները, բերել տալ և սեպտեմբերից արդէն սկսել այս արհեստը:

Ինչ վերաբերում է բնակարանին, որոշուած է առաջիկայ սեպտեմբերից անպատճառ տեղափոխուել մի այլ աւելի ընդարձակ բնակարան: Այս նպատակաւ Վարչութիւնս վաղուց արդէն սկսել է բնակարաններ նայել և մի երկուսը ունի ի նկատի: Եթէ յարմար տուն լինի, ընկերութեան միջոցներին համապատասխան գնով, մտադիր է նոյնիսկ ընդհանուր ժողովի հաւանութեամբ գնել այսպիսին: Սակայն այս նպատակով մինչև այժմ նայած տներից և ոչ մէկը յարմարութիւն չունէր:

1907 թուի մարտի 25-ի ընդհանուր ժողովում որոշուած էր Ընկերութեան համար մշակած նոր կանոնադրութիւնն առաջարկել ի հաստատութիւն: Վարչութիւնս տեղեկանալով, որ այդ նոր կա-

նոնագրութիւնը ներկայացնելով ի հաստատութիւն, կարող ենք դըժուարութիւնների հանդիպել այն տեսակէտից, որ գուցէ մինչ հաստատուիլը ստիպուած լինենք ընկերութիւնը փակել տեղը նորը հիմնելու համար, կամ թէ հնարաւորութիւն չունենանք նորը հնի շարունակութիւնը համարել, ուստի որոշուեց ներկայացնել ոչ թէ նոր կանոնագրութիւն, այլ հինը՝ որոշ փոփոխութիւններով։ Վերջին նպատակը իրագործելու համար կարեւոր էր ընդհանուր ժողովից երաշխաւորութիւն ունենալ, այսինքն կանոնագրութեան հետ ներկայացնել ընդհանուր ժողովի արձանագրութիւնը ներկայ եղող անդամների ստորագրութեամբ, որ ընդհանուր ժողովը թոյլ է տալիս այսինչ անձնաւորութիւններին, կանոնագրութեան այսինչ կէտերը փոփոխելու, մշակելու և առաջարկելու պատշաճ իշխանութեան ի հաստատութիւն։

Այս տեղեկութիւնները հաւաքելուց յետոյ ի նկատի ունենալով, որ ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովի օրը մօտենում է, վարչութիւնս աւելորդ համարեց արտակարգ ժողով գումարել և որոշեց սպասել մինչև տարեկան ընդհանուր ժողովը։

1907 թուին վարչութիւնս ունեցել է 24 հերթական նիստ և 10-ը խորհրդակցական։

Վարչութիւնս յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը բըժիշկ Նիկողայոս Խատիսեանին, որը ձրի բժշկում է արհեստանոցի աշակերտուհիներին և պ. Վ. Ա. Այրումեանցին, որ գանձապահի բացակայութեան ժամանակ օգնում էր ընկերութեան հաշիւները պահելու ճիշտ հաշուապահական կանոնների համաձայն։

---

## ՁԵԿՈՒՑՈՒՄՆ ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՄԱՍԻՆ 1906—907 ՈՒՍ. ՏԱՐՈՒԱՅ

1907 թ. սեպտեմբերին արհեստանոցում կային 127 աշակերտուհի, որոնք հետեւեալ կերպով էին դասաւորուած.

| | | |
|---|---|---|
| I | բաժանմունքում. | 33 |
| II | « | 31 |
| III | « | 29 |
| IV | « | 20 |
| V | « | 14 |
| | Ընդամենը | 127 աշ. |

Տարուայ զանազան ժամանակներում արհեստանոցից հեռացան 14 աշակերտուհի հետեւեալ պատճառներով.

| | |
|---|---|
| Հիւանդացան. | 3 |
| Տեղափոխուեցին ուրիշ քաղաք. | 2 |
| Մտաւ գիմնազիա. | 1 |
| Մտաւ այլ արհեստանոց. | 1 |
| Ընտանեկան հանգամ. ստիպուած. | 4 |
| Ամուսնացան. | 3 |

Բոլոր աշակերտուհիների ծնողներին ըստ պարապմունքի կարելի է բաժանել հետեւեալ դասակարգերին։

| | |
|---|---|
| Արհեստաւոր | 59 |
| Մանրավաճառ | 28 |
| Վաճառական | 16 |
| Գործակատար | 13 |
| Ծառայող | 2 |
| Բանուոր | 8 |
| Հոգեւորական | 1 |

Արհեստանոցի որբերի թիւն է 7, իսկ կիսաորբերի, որոնք զուրկ են հօրից—32.

Արհեստանոցի աշակերտուհիները, բացի I նախապատրաստական բաժանմունքից՝ որտեղ պատուէրներ չեն ընդունում, կարել են հետևեալ պատուէրները և վաստակել են.

| | |
|---|---|
| II բաժ. կարել է 150 կտոր կանանց սպիտակեղէն և վաստակել է | 123 ռ. 50կ. |
| III բաժ. կարել է 42 կտոր մանկական զգեստներ ու կանանց բլուզներ, 105 նշանագիր հարթակարով և վաստակել է | 188 ռ. 05 կ. |
| IV և V բաժանմունքները կարել են 38 ամբողջ զգեստ, 54 բլուզ, 23 շրջազգեստ 11 կտոր վերանորոգել և վաստակել են | 650 ռ. 80 կ. |
| Ընդամենը | 962 ռ. 35 կ. |

Բացի պատուէրներից, արհեստանոցի բոլոր աշակերտուհիները պատրաստել են նաև կանանց սպիտակեղէն, բլուզներ, օձիքներ, մանկական զգեստներ և գոգնոցներ տարեկան սովորական վաճառքի համար, որ տեղի է ունենում ընդհանուր ժողովի օրը։ Այդ վաճառքից մնացել է զուտ արդիւնք 95 ռ. 54 կ., որ գումարելով պատուէրներից ստացած արդիւնքի հետ, ստացւում է ընդամենը—1057 ռ. 89 կ.

Տարուայ ընթացքում ամեն մի աշակերտուհի բացակայել է միջին թւով 13 օր։

Տարուայ վերջը աշակերտուհիները հետևեալ յառաջադիմութիւնը ցոյց տուին։

| | |
|---|---|
| Փոխադրուեցին հետևեալ բաժանմունք | 92 աշ. |
| Մնացին նոյն բաժանմունքում | 8 |
| Աւարտեցին և ստացան վարպետուհու վկայական | 14. |

Ընթացաւարտ աշակերտուհիներից մէկը գնաց գաւառ—վարժուհու պաշտօնով. երկուսը պատրաստւում են գիմնազիա մտնելու. երկուսը մասնաւոր արհեստանոց են բաց արել. մէկն ամուսնացաւ,



իսկ մնացածները տանն են ընդունում պատուէրներ, կամ գնում ընտանիքներ օրով բանելու։

Արհեստանոցի ուսուցչական խումբը, որ բաղկացած է 8 վարժուհուց և մի աւագ վարժուհուց, ունեցել է մանկավարժական ժողովի 7 նիստ, երբեմն վարչութեան անդամների ներկայութեամբ, որտեղ արծարծուել և վճռուել են մանկավարժական և մասնագիտական խնդիրներ արհեստանոցին վերաբերեալ։

Չքաւոր աշակերտուհիների թիւն էր 33, նրանք ստացել են զգեստ, կօշիկ, կրկնակօշիկ, սպիտակեղէն, դասական և ձեռագործի պիտոյք և երբեմն դրամական օգնութիւն։ Սրանց թւումն են և բարերարների անուան 7 թոշակառու աշակերտուհիք։

Պարապմունքը սկսուել է սեպտ. 1-ին և վերջացել յունիսի 10-ին։

## ՄՈՒՏՔ

| | Նախահաշիւ 1907 թ. | | Իսկական եկամուտ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **1907 թ. յունուարի 1-ին մնում էր.** | | | | | | |
| Առձեռն դրամ գանձապահի մօտ | | | 1100 | — | | |
| Պետական խնայող. գանձարանում | | | 1051 | — | | |
| Տոկոսաբեր արժէթղթեր | | | 22988 | 44 | | |
| Շարժական կայք | | | 1278 | — | | |
| Ձեռագործի նիւթեր | | | 400 | 71 | 26818 | 15 |
| 1. 3 անդամից միանուագ վճար | 600 | — | 450 | — | | |
| 2. 170 անդամից 6-ական ռուբլի | 900 | — | 1020 | | | |
| 3. Ջրօսանքից և պարահանդէսից | 3000 | — | 3040 | 58 | | |
| 4. Նուիրատուութիւններ | 300 | — | 950 | | | |
| 5. Տոկոս ընկերութեան արժէթղթերից | 868 | — | 752 | 87 | | |
| » յատուկ դրամագլխից | | | 133 | | | |
| » Պետական խնայողական գանձարանում | | | 40 | 56 | | |
| 6. Կարուձևի արհեստանոցի պատուէրներից | 950 | — | 1090 | 42 | | |
| 7. Պատուէրների և դպրոցական վաճառքի համար գործադրած նիւթերից | — | — | 611 | 82 | | |
| 8. Ձեռագործների վաճառքից | 150 | — | 95 | 54 | | |
| 9. Հին իրերի վաճառքից | — | — | 2 | — | | |
| 10. Ձեղչ | — | — | 1 | 15 | | |
| | 6768 | | 8187 | 94 | | |
| Նուիրատուութիւն տ. Վ. Միլեանից Իյիշատակ հանգուցեալ հօր Ս. Փոնդոյեանի (որի տոկոսիքը յատկացնել մի թոշակառուի) | — | — | 500 | — | 8687 | 94 |
| | 6768 | | | | 35506 | 09 |

## ԵԼՔ

| | | 1907 թ. Նախահաշիւ | | Իսկական ծախս | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ծախսուած է** | | | | | | | |
| 1. Վարժապետուհիներին և վարժուհիներին ռոճիկ | | 3780 | — | 3819 | 57 | | |
| 2. Ծառայողներին ռոճիկ | | 348 | — | 348 | — | | |
| 3. Բնակարանի վարձ և ջրի փող | | 1000 | — | 1160 | — | | |
| 4. Մանր ծախք | | 60 | — | 50 | 89 | | |
| 5. Վառելիք | | 140 | — | 136 | 85 | | |
| 6. Դեղօրայք | | 30 | — | 24 | 19 | | |
| 7. Տարազի ամսաթերթեր | | 27 | — | 23 | 30 | | |
| 8. Պատուէրների և դպրոց. ձեռագ. համար նիւթեր | | 60 | — | 657 | 88 | | |
| 9. Կահ-կարասիքի վերանորոգում | | 60 | — | 27 | 43 | | |
| 10. Ջրօրհնեաց և Զատկի տօներին նուիրուած է | | 100 | — | 99 | — | | |
| 11. Կ. Եւանգուլեանի, Ն. Փրիգոնեանի, Կ. Մութաֆեանի, Ն. Թամամշեանի և Մ. Մակարեանի անուան թոշակառուներին | | 133 | — | 133 | — | | |
| 12. Չքաւոր աշակերտուհիներին զգեստ | | 120 | — | 98 | 95 | | |
| 13. Չքաւորներին նպաստ | | | | 117 | 89 | | |
| 14. Դիւանական և տպագրական ծախքեր | | 150 | — | 99 | — | | |
| 15. Տոմսակները պահելու և ապահովագր. | | 40 | — | 32 | 20 | | |
| 16. Պատուէրներից բանուորուհ. օգտին հանած տոկոս | | 120 | — | 102 | 99 | | |
| 17. Յոբելեանի ծախսեր | | 300 | — | 362 | 71 | | |
| 18. Էկսպերտներին | | — | — | 10 | | | |
| 19. Անակնկալ ծախսեր | | — | — | 135 | 03 | 7388 | 88 |
| | | 6468 | — | | | | |
| **1908 թ. յունուարի մէկին մնում է.** | | | | | | | |
| 1. Ընկերութեան գանձարանում | | | | 845 | 06 | | |
| 2. Պետական խնայողական գանձարանում | | | | 1991 | 56 | | |
| 3. Տոկոսաբեր թղթերով· | | | | | | | |
| կար | 22988 ռ. 44 կ-ի | | | | | | |
| 1907 թ. գնուած է | 456 ռ. 38 կ-ի | | | 23444 | 82 | | |
| 4. Շարժական կայք· | | | | | | | |
| կար | 1278 ռուբլու | | | | | | |
| 1907 թ. աւելացել է | 168 ռ. 10 կ-ի | | | 1446 | 10 | | |
| 5. Ձեռագործի նիւթեր· | | | | | | | |
| կար | 400 ռ. 71 կ-ի | | | | | | |
| 1907 թ. առնուած է | 646— 84 | | | | | | |
| | 1047—55 | | | | | | |
| որից ծախսուած է | 657—88 | | | 389 | 67 | 28117 | 21 |
| | | 6468 | | | | 35506 | 09 |

Ելեմտից հաշուի համաձայն ընկերութեան 1907 թուի եկամուտը արտայայտուեց հետեւեալ գումարով 8187 ր. 94 կ.

Դրանից 5% աւելացնելով անձեռնմխելի գումարին . . . 409 ր. 40 կ.

Ընդհանուր մուտքը կազմում է . 7778 ր. 54 կ.

Ընկերութիւնը 1907 թուին ծախք է ունեցել . . . . . 7388 ր. 88 կ.

Եկամուտից դուրս գալով ծախքը, մնում է . . . . . 389 ր. 66 կ.

Որ աւելացրած է ծախսի գումարին

Այսպիսով ընկերութեան 1908 թուի յունուարի 1-ի Բալանսը արտայայտւում է հետեւեալ թուերով

---

## ԱԿՏԻՒ — 1908 թուի յունուարի 1-ի բալանսը — ՊԱՍՍԻՒ

| ԱԿՏԻՒ | | ՊԱՍՍԻՒ | | |
|---|---|---|---|---|
| Առձեռն դրամ գանձապահի մօտ | 845 ռ. 06 կ. | Անձեռնմխելի դրամագլուխ. | | |
| Պետական խնայող. գանձարանում | 1991 ռ. 56 կ. | Առ 1-ն յունուարի 1907 թ. եղել է . . . | 11300 ռ. | |
| Տոկոսաբեր արժէթղթեր | 23444 ռ. 82 կ. | Եկամուտից աւելացաւ . | 409 ռ. 40 կ. | 11709 ռ. 40 կ. |
| Շարժական կայք | 1446 ռ. 10 կ. | Յատուկ դրամագլուխ . | | |
| Ձեռագործի նիւթեր (մնացորդ) | 389 ռ. 67 կ. | Առ 1-ն յունուարի 1907 թ. եղել է . . . | 3500 ռ. | |
| | | Ստացուել է նոյն թուին | 500 ռ. | 4000 ռ. |
| | | Պահեստի դրամագլուխ . | | 8,500 ռ. |
| | | Ծախսի գումար . | | |
| | | Առ 1-ն յունուարի 1907 թ. եղել է . . . | 3518 ռ. 15 կ. | |
| | | 1907 թուին աւելացել է | 389 ռ. 66 կ. | 3907 ռ. 81 կ. |
| ԲԱԼԱՆՍ | 28117 ռ. 21 կ. | ԲԱԼԱՆՍ | | 28117 ռ. 21 կ. |

# ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒԸ
## 1908 թուի

### ՄՈՒՏՔ

| | |
|---|---|
| 1. Միանուագ վճարող մշտական անդամներից . . . | 600 ռ. |
| 2. Իսկական անդամներից 6-ական ռ. վճարող . . . | 966 ռ. |
| 3. Պարահանդէսներից, զբօսանքներից և այլն . . . | 3400 ռ. |
| 4. Նուիրատուութիւններ . . . . . . | 600 ռ. |
| 5. Ընկերութեան գումարների տոկոսը . . . . | 950 ռ. |
| 6. Պատուէրներից եկամուտ . . . . . | 1035 ռ. |
| 7. Ձեռագործների վաճառքից.. . . . . | 150 ռ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 7731 ռ. |

### ԵԼՔ

| | |
|---|---|
| 1. Վարժուհիներին ռոճիկ . . . . . . | 4410 ռ. |
| 2. Ծառաներին » . . . . . . . | 372 ռ. |
| 3. Բնակարանի վարձ և ջրի փող . . . . . | 1400 ռ. |
| 4. Մանր ծախքեր . . . . . . . . | 60 ռ. |
| 5. Վառելիք . . . . . . . . . | 140 ռ. |
| 6. Դեղօրայք . . . . . . . . . | 30 ռ. |
| 7. Տարազի ամսաթերթեր . . . . . . . | 27 ռ. |
| 8. Նախապատրաստ. վարժութիւնների համար . . . ձեռագործի նիւթեր . . . . . | 60 ռ. |
| 9. Կահ-կարասիքի և վերանորոգութեան . . . . | 150 ռ. |
| 10. Տօներին չքաւորներին նուիրատուութիւններ . . | 100 ռ. |
| 11. Թոշակառուներին . . . . . . . | 152 ռ. |
| 12. Չքաւոր բանուորուհիներին զգեստ և նպաստ . . | 170 ռ. |
| 13. Դիւանական և դպրոցական ծախքեր . . . | 100 ռ. |
| 14. Տոմսակները պահելու և ապահովագրութեան . . | 40 ռ. |
| 15. Բանուորուհիների օգտին հանած գումարը . . . | 120 ռ. |
| 16. Անձեռնմխելի դրամագլխի վրայ աւելացնելիք գումարը . | 400 ռ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 7731 ռ. |

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*С.С.Р.А Публичная Библиотека*
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ 1907 Թ.

Հաշուետուութեան տարին վերստուգիչ յանձնաժողովը բաղկացած էր երեք անդամներից տ. տ. Հ. Աւթանդիլեան, Ս. Բարխուդարեան և Ն. Աւետեան, որոնք ստուգելով ընկերութեան ելևմտից հաշիւը և համեմատելով փաստաթղթերի հետ, գտան, որ հաշիւները պահւում են կանոնաւոր և միանգամայն համապատասխանում են ներկայացրած փաստաթղթերին։

---

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Ընկերութեան պատուաւոր անդամներ՝

պ. Ա. Քիշմիշեան
տ. Վ. Ռոտինեան
տ. Մ. Խատիսեան
տ. Հ. Մարտիրոսեան
տ. Ն. Ղամբարեան

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ատենապետուհի՝ տ. Վ. Ռոտինեան
Փոխ ատենապետուհի՝ տ. Հ. Մարտիրոսեան

| Անդամներ | Փոխ-անդամներ |
| --- | --- |
| տ. Մ. Ցուրինեան | տ. Մ. Ղարաջեան |
| տ. Ն. Ղամբարեան | տ. Հ. Առստամեան |
| տ. Վ. Միլեան | տ. Հ. Դաւթեան |
| տ. Ե. Յարութիւնեան | օր. Կ. Ղուլիջանեան |
| տ. Մ. Խատիսեան | |
| տ. Շ. Օգանէսեան | |
| տ. Մ. Լիսիցեան | |
| **Վերստուգիչ մասնաժողովի անդամներ** | **Փոխ-անդամներ** |
| տ. Հ. Աւթանդիլեան | տ. Վ. Սպարապետեան |
| տ. Ս. Բարխուդարեան | տ. Մ. Կուսիկեան |
| տ. Ն. Աւետեան | |

## ՄԻԱՆՈՒԱԳ ՎՃԱՐՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ

տ. Աւթանդիլեան Հեղինէ
տ. Ալիբէգեան Նունէ
տ. Ալիխանեան Նադեժդա
տ. Աղաբէկեան Մարիամ
† իշ. Արղութեան Երկայնաբազուկ Մարիամ Սոլ.
իշ. Արղութեան-Երկայնաբազուկ Մարիամ Յովհ.
տ. Ադիլխանեան Հեղինէ
օր. Աւթանդիլեան Եղիսաբէթ
տ. Բաբայեան Սոֆիա
տ. Բաղդասարեան Անահիտ (10)
տ. Բաբայեան Վարվառէ
իշ. Բէհբութեան Կատարինէ
իշ. Բէհբութեան Վարվառէ
† իշ. Բէկլթաբէկեան Մարիամ
† Դոլուխանեան Եղիսաբէթ
տ. Եւանգուլեան Վարվառէ
տ. Եարալեան Կատարինէ
† տ. Էմինեան Աննա
կոյս Էնֆիաճեան Իսկուհի
տ. Թայիրեան Եղիսաբէթ (20)
կոյս Թայիրեան Հռիփսիմէ
տ. Թիւնիբէկեան Եղիսաբէթ
տ. Խատիսեան Մարիամ
տ. Ծովիանեան Մարիամ
տ. Ծատուրեան Վարդուհի
տ. Ղորղանեան Նունէ
տ. Ղամբարեան Նունէ
տ. Ղարաջեան Մարիամ
տ. Ճգնաւորեան Մարիամ
տ. Մանթաշեան Դարիա (30)
տ. Մարկոսեան Կատարինէ
տ. Մարտիրոսեան Հայկանոյշ
տ. Մարտիրոսեան Մարիամ
† տ. Մեհրաբեան Կատարինէ
տ. Միլեան Վարվառէ
տ. Մութաֆեան Շողակաթ
տ. Նադիրեան Կատարինէ
տ. Նունուֆարեան Նատալիա
† տ. Շադինեան Քալի
տ. Ջիթախեան Սոֆիա (40)
տ. Ռոտինեան Նատալիա
տ. Ռոտինեան Աննա
տ. Ռոտինեան Վարվառէ
տ. Սաֆարեան Նատալիա
տ. Սարուխանեան Յուստինէ
տ. Վարդանեան Աննա
տ. Վարդանեան Նունէ
տ. Տէր-Առաքելեան Եւգինէ
տ. Տէր-Մարգարեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սոֆիա (50)
տ. Օհաննէսեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սաթենիկ

## ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

### Ա.

օր. Աբրահամեան Եղիսաբէթ Ն. ա.
տ. Աբեսալոմեան Նունէ
տ. Աբովեան Նոյեմզար
տ. Աբովեան Նատալիա
տ. Աւետիսեան Ոսկի
տ. Աւետեան Նունէ
տ. Ալիբէգեան Մարգարիտ Ն. ա.



տ. Անանեան Վարվառէ Ն. ա.
տ. Ամբարդանեան Թամարա Ն. ա.
տ. Ամբարդանեան Վարվառէ
տ. Ալիխանեան Վարվառէ
տ. Աբիեան Մարգարիտ
տ. Աղայեան Նատալիա
տ. Անանեան Մարիամ
օր. Աղանեան Նուարդ Ն. ա.
օր. Աղաջանեան Սոֆիա Ն. ա.
տ. Ալիբէգեան Կատարինէ Ն. ա.
տ. Ալխազեան Նունէ Ն. ա.
իշ. Արղութեան-Երկայնաբազուկ Սոֆիա
տ. Արզումանեան Փառանձեմ
տ. Առստամեան Հեղինէ
տ. Առաքելեան Եղիսաբէթ
տ. Աստուածատրեան Հեղինէ
տ. Աղամալեան Վիկտորիա Ն. ա.
իշ. Աբամելիք Դարիա Ն. ա.

### Բ

իշ. Բէհբութեան Նադեժդա
օր. Բաստամեան Վէրա (Նոր անդամ)
տ. Բայտողեան Շուշանիկ
տ. Բարխուդարեան Վարդուհի
տ. Բաբանասեան Թամար
տ. Բէկզադեան Հեղինէ
տ. Բարխուդարեան Եղիսաբէթ
տ. Բարխուդարեան Սաթենիկ
իշ. Բէկլթաբէկեան Աննա
տ. Բէհբութեան Մարիամ
տ. Բէհբութեան Աննա
տ. Բերէնս Մարիամ
տ. Բոզարջեան Մարիամ
տ. Բոզարջեանց Վարվառէ Ն. ա.

### Գ

օր. Բիչիկեան Նունէ Նոր անդ.
տ. Գարսոյեան Սոֆիա. (Նոր անդամ)
տ. Գիրգիդեան Եղիսաբէթ
օր. Գոզալեան Օլգա
տ. Գուլազեան Վարվառէ
տ. Գէորգեան Սոֆիա
տ. Գասպարեան Սարրա

### Դ

տ. Դաւթեան Յորդենզիա
օր. Դաւթեան Քալի (Նոր անդամ)
օր. Դոլուխանեան Օլգա
տ. Դոլուխանեան Նունէ։

### Ե

տ. Երամեան Հռիփսիմէ
տ. Երէցփոխեան Սոֆիա
տ. Եարալեան Նատալիա Ն. ա.

### Զ

տ. Զօրեան Զ. Եղիսաբէթ

### Է

Էնիկոլոփեան Եղիսաբէթ
տ. Էնիկոլոփեան Նատալիա
տ. Էնֆիաճեան Աննա Նոր ան.

### Թ

տ. Թամամշեան Կատարինէ Ն. ա.
տ. Թադէոսեան Վարվառէ
տ. Թադէոսեան Ռոզալիա
իշ. Թումանեան Մարիամ
տ. Թումաս Օսաննա

### Ի

տ. Իւզբաշեան Մարիամ
տ. Իւզբաշեան Սոֆիա Ն. ա.

տ. Իգիթխանեան Միրաքեան Նունէ
տ. Իզմայիլեան Աննա
տ. Իզմիրեան Սոֆիա
տ. Իւզբաշեան Նատալիա ն. ա.

### Լ

տ. Լալայեան Հայկանոյշ
տ. Լիսիցեան Կատարինէ
տ. Լիսիցեան Մարիամ
տ. Լիսիցեան Հեղինէ (ն. անդամ)
տ. Լիանոզեան Մարիամ ն. ա.

### Խ

տ. Խաչատրեան Հռիփսիմէ ն. ա.
տ. Խաչատրեան Եղիսաբէթ ն. ա.
տ. Խատիսեան Րոզալիա ն. ան.
տ. Խաչատրեան Նունէ
տ. Խարազեան Մարիամ
տ. Խալաթեան Կատարինէ
տ. Խուդադեան Մարիամ
տ. Խալաթեան Եղիսաբէթ
տ. Խունունց Գայիանէ (նոր անդամ)

### Կ

տ. Կաֆեան Նունէ նոր անդամ
տ. Կուզանեան Աննա
տ. Կուսիկեան Մարիամ
տ. Կուկուջանեան Աննա

### Հ

տ. Համբարձումեան Կատարինէ
տ. Հաքիմեան Մարիամ
օր. Հախվերդեան Աննա
օր. Հախվերդեան Մաննա
տ. Հայրումեան Սաթինիկ ն. ան.

### Ձ

տ. Ձամոյեան Եւգինէ (ն. ան.)
տ. Ձիթողցեան Շուշանիկ

### Ղ

տ. Ղուլեան Աննա
տ. Ղարաջեան Մարիամ
տ. Ղուլիջանեան Կատարինէ
տ. Ղազարեան Կլաւդիա
տ. Ղալամքարեան Թամար
տ. Ղազազեան Սոֆիա
տ. Ղուլիջանեան Մարիամ
տ. Ղորղանեան Աննա
տ. Ղլտճեան Սաթենիկ

### Մ

տ. Մնացականեան Փարանձեմ
տ. Միրզոյեան Աննա
տ. Մելիք-Բախտամեան Նունէ
օր. Մելիք-Ազարեան Սոֆիա
տ. Մելիք-Ղարագեօզեան Մարիամ
տ. Միրզոյեան Սոֆիա
տ. Միրիմանեան Կատրինէ
տ. Միրիմանեան Մարիամ
տ. Միրիմանեան Նատալիա
տ. Մուրադեան Հռիփսիմէ
տ. Մութաֆեան Լիւսի
տ. Մխիթարեան Շուշանիկ նոր անդամ

### Յ

տ. Յովհաննիսեան Շուշանիկ
տ. Յակոբեան Շուշանիկ
տ. Յակոբեան Սոֆիա



տ. Յակոբեան Նունէ
տ. Յարութիւնեան Երանուհի

### Ն

տ. Նազարբէգեան Կատարինէ (ն. անդամ)
տ. Նազարբէգեան Հեղինէ
տ. Նալբանդեան Հեղինէ

### Շ

տ. Շահնազարեան Նատալիա ն. ա.
տ. Շարբաբչեան Նունէ ն. ա.
տ. Շաթիրեան Իւղաբեր ն. ան.
տ. Շադինեան Վարվառէ
տ. Շահ-Պարոնեան Ռոզալիա

### Ո

տ. Ումիկեան Աննա
տ. Ունուտցեան Կատարինէ

### Չ

տ. Չէշմաճեան Ովսաննա ն. ա.

### Ռ

տ. Ռոտինեան Նատալիա
տ. Ռոտինեան Կատարինէ

### Ս

օր. Սալամբէգեան Նունէ (նոր անդամ)
տ. Սունդուկեան Սոֆիա
տ. Սարեան Սոֆիա
տ. Սարուխանեան Եղիսաբէթ
տ. Սեանեան Աննա ն. անդ.
տ. Սազաթէլեան Զարուհի ն. ա.
տ. Սարգսեան Եկատերինէ ն. ա.
տ. Ստեփանեան Թամարա ն. ա.
տ. Սպարապետեան Վարվառէ ն. անդ.
տ. Սերեբրակեան Նունէ

### Վ

տ. Վարդապետեան Նադեժդա
տ. Վահրամեան Եւգենիա

### Տ

տ. Տէր-Աւետիքեան Նունէ ն. ա.
տ. Տէր-Յակոբեան Սոֆիա
տ. Տէր-Նիկողոսեան Նատալիա
տ. Տէր-Միքայէլեան Եղիսաբէթ (նոր անդամ)
օր. Տէր-Մկրտչեան Եւա
տ. Տէր-Զանեան Սոֆիա
տ. Տէր-Դաւթեան Թեկլէ
տ. Տէր-Օհաննէսեան Նատալիա
տ. Տէրտէրեան Սաթենիկ
տ. Տիգրանեան Նատալիա
տ. Տիգրանեան Նադեժդա

### Ց

տ. Ցուրինեան Ալէքսանդրա
տ. Ցուրինեան Հեղինէ
տ. Ցուրինեան Մարգարիտ

### Փ

տ. Փոնդոյեան Կատարինէ
տ. Փրիդոնեան Մարիամ

### Ք

տ. Քոնանեան Նատալիա ն. ան.
տ. Քալանթար Սոֆիա

տ. Քաթանեան Կատարինէ
տ. Քամոյեան Մարիամ Ն. ան.
տ. Քալանթարեան Աննա Ն. ան.
տ. Քիշմիշեան Թամար
տ. Քալանթարեան Մարիամ

O

տ. Օհաննէսեան Մարիամ
տ. Օհաննէսեան Մարիամ Գէորգեան Ն. անդ
օր. Օրբէլի Կատարինէ Ն. ան.
օր. Օրբէլի Վարդուհի Ն. ան.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԶԲԱՂՄԱՆ ՆԻՒԹԸ

1. 1907 թուի մարտի 25-ին կայացած ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցում։
2. Վարչութեան 1907 թուի գործունէութիւնը։
3. Ընկերութեան 1907 թուի ելևմուտից հաշիւը։
4. Վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը։
5. Կարուձևի արհեստանոցի կառավարչուհու զեկուցումը։
6. Նախահաշուի ընթերցումը և վաւերացումը։
7. Կանոնագրութեան մի քանի կէտերը փոփոխութեան ենթարկելու խնդիրը։
8. Արհեստանոցի համար սեփական շէնք ձեռք բերելու խնդիրը։
9. Վարչութիւնից հերթով դուրս եկող 3 անդամի, 4 փոխանդամի, վերաստուգիչ յանձնաժողովի և փոխանդամների ընտրութիւնը։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0215865

42. 775